ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1961 Общественные науки

Ա. Մ. Թելուցց

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի նոր Ծրագրի ընդունումը և XXII համագումարի գծած հեռանկարները մեծագույն իրագործություն են պարտիայի, սովետական ժողովրդի, ամբողջ առաջադեմ մարդկության կյանքում։ XXII համագումարի ընդունած ամենանշանավոր փաստաթղթի մեջ տրված է արդի դարաշրջանի բնութագրությունն ու գիտական վերլուծությունը, հանրագումարի է բերված բոլոր ժողովուրդների աղատագրական պայքարի, ՍՍՌՄ-ում և սոցիալիստական երկրներում սոցիալիզմի կառուցման փորձը, բացահայտված են կոմունիզմի կառուցման կոնկրետ ուղիները, ծավալուն կերպով բնութագրված է կոմունիստական հասարակարգը։

Պարտիայի Ծրագրում հատուկ տեղ են գրավում գիտության զարգացման խնդիրներն ու հեռանկարները, ընդգծվում է նրա մշտապես աճող դերը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում՝ նյութական արտադրության զարգացման, արտադրական հարաբերությունների կատարելագործման, նոր մարդու, նրա գիտական աշխարհայացքի ձևավորման մեջ։ Եվ դա բնական է. «Գիտատեխնիկական բուռն առաջադիմության մեր դարում,— ասում է Ն. Ս. Խրուշչովը,— անկարելի է հասարակության և մարդկային անհատի զարգացումը՝ առանց գիտության նվաճումների պլանաչափ և համակողմանի օգտագործման»[1]։

Հայտնի է, որ գիտությունը իր արտադրական կիրառման պրոցեսում հանդես է գալիս ոչ միայն որպես արտադրական ուժերի զարգացման կարևորագույն միջոց, այլև՝ որպես անմիջական արտադրող ուժ։ Իր այդ դերը գիտությունը դրսևորել է վաղուց, դեռևս կապիտալիստական հասարակարգում։ Սոցիալիստական հասարակարգը որակական նոր բնույթ է տվել գիտության արտադրական դերին։ Լայն պայմաններ ու հնարավորություններ ստեղծելով գիտության զարգացման համար, սոցիալիստական հասարակարգը միաժամանակ ընդլայնել է գիտության նվաճումների արտադրական օգտագործման հնարավորությունները, ապահովել է գիտության և արտադրողի միացումը արտադրության պրոցեսում։ Այդ բոլորի արդյունքները հանրահայտ են. սոցիալիստական երկրի գիտությունը մի շարք կարևոր բնագավառներում դուրս է եկել առաջին տեղն աշխարհում, դարձել հզոր սոցիալիստական արտադրության հոգևոր գործոնը։ Նա դարձել է սոցիալիստական արտադրության տեսական հիմքը, գործնական ֆունկցիան, արտադրության ավտոմատացման ու կոմպլեքսային մեքենայացման, երկրի հզոր էներգետիկայի ստեղծման ու զարգացման, ամբողջ նյութական արտադրության վերելքի անհրաժեշտ աղդակը։ Սոցիալիզմից կոմունիզ-

---

[1] *Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագրի մասին։ Զեկուցում ՍՄԿՊ XXII համագումարում, Հայպետհրատ, 1961, էջ 120։*

մին անցնելու պրոցեսում գիտության արտադրական դերը բացահայտված է ՍՄԿՊ Ծրագրի հայտնի դրույթներում. գիտությունը լիակատար չափով կդառնա անմիջական արտադրողական ուժ. նրա կիրառումը՝ արտադրողական ուժերի հզոր աճի վճռական գործոն:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար հատուկ նշանակություն ունեն բնագիտության առաջատար ճյուղերը, որովհետև, ինչպես նշված է պարտիայի Ծրագրում, ներկա ժամանակաշրջանում ամենից առաջ դրանց նվաճումներով են որոշվում գիտության ու տեխնիկայի առաջադիմության հետագա հեռանկարները: Մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության զարգացման բարձր մակարդակն է տեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական և այլ գիտությունների վերելքի և արդյունավետության պայմանը: Այդ գիտությունները անմիջականորեն գործադրվում են արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, ծառայում տեխնիկայի զարգացմանը, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, գլխավոր արտադրող ուժի՝ աշխատավոր մասսաների աշխատանքի պայմանների բարելավմանը:

Կոմունիզմի կառուցման պրոցեսը բնութագրվում է ոչ միայն արտադրողական ուժերի արագ աճմամբ, այլև դրանց բուն բովանդակության որակական փոփոխություններով: Արտադրության տեխնիկական բազիսը դառնում է ավտոմատացված և կոմպլեքսային մեքենայացված արդյունաբերությունը, որը վերափոխում է նաև գյուղատնտեսական արտադրությունը, աստիճանաբար դարձնելով այն արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկը: Անշեղորեն բարձրանում է արտադրության էներգետիկական բազայի նշանակությունը, գործադրության մեջ են մտնում էներգիայի նոր տեսակները, այդ թվում ատոմային էներգիան: Ընդլայնվում է սինթետիկ նյութերի արտադրության ու գործադրման ոլորտը, աճում է դրանց դերը արտադրության մեջ: Կիրառվում են բնության հարստությունների և ռեսուրսների օգտագործման ավելի ռացիոնալ միջոցները, բարձրանում է մարդու իշխանությունը բնության ուժերի վրա, պրակտիկ խնդիր է դառնում տիեզերական տարածությունների նվաճումը, կլիմայական պայմանների փոփոխումը: Սոցիալիստական արտադրության զարգացման ընթացքում գիտատեխնիկական առաջադիմությունը պայմանավորում է նաև գլխավոր արտադրող ուժի՝ արտադրությունն իրականացնող մարդկանց դերի պրոգրեսիվ աճը: Ի հակադրություն կապիտալիստական հասարակարգի, որի պայմաններում գիտատեխնիկական պրոգրեսը հանգեցնում է արտադրողների ֆիզիկական ու հոգևոր ուժերի վատնմանն ու հյուծմանը, մարդկանց արտադրության կցորդի աստիճանին իջեցնելուն և մասսայաբար արտադրությունից դուրս վանելուն, սոցիալիստական հասարակարգում գիտատեխնիկական առաջադիմությունը հանգեցնում է աշխատանքի պայմանների թեթևացմանն ու բարելավմանը, աշխատաժամանակի կրճատմանը. նա ծառայում է արտադրողների կուլտուրական ու տեխնիկական մակարդակի բարձրացմանը, պայմաններ է ստեղծում ձեռքի ծանր աշխատանքը լիովին վերացնելու, արտադրության մեջ աստիճանաբար ֆիզիկական ու մտավոր աշխատանքը միացնելու համար, որպեսզի բոլոր աշխատավորներին արտադրության պրոցեսի կուրդավորիչներ, հսկիչներ և իսկական հրամանատարներ դարձնի: Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման պրոցեսն, այսպիսով, ընդգրկում է ինչպես արտադրության իրային կոմպոնենտների, տեխնիկայի ու տեխնոլոգիայի

զարգացումը, այնպես էլ գիտության օրգանական միաձուլումը արտադրողների հետ, աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, կապիտալիզմի համեմատությամբ աշխատանքի ավելի բարձր արտադրողականության ապահովումը։

Մեծապես բարձրանում է գիտության դերը նաև բազմակողմանիորեն զարգացած և բարձր մթերատու գյուղատնտեսական արտադրություն ստեղծելու համար, որը կոմունիզմի կառուցման պարտադիր պայմանն է։ Գիտությունը կոչված է՝ մշակելու և արմատավորելու հողագործության և անասնապահության ռացիոնալ սիստեմները, լայնորեն աջակցելու գյուղատնտեսության կոմպլեքսային մեքենայացմանն ու ավտոմատացմանը, էլեկտրիֆիկացմանն ու քիմիացմանը։ «Գիտական հիմնարկներն ու փորձակայանները,— ասված է պարտիայի Ծրագրում,— պետք է դառնան կարևոր օղակներ գյուղատնտեսության ղեկավարման ասպարեզում, իսկ գիտնականներն ու մասնագետները՝ գյուղատնտեսական արտադրության անմիջական կազմակերպիչներ»[2]։

Գիտության դերը բնավ չի սահմանափակվում միայն գոյություն ունեցող արտադրության անմիջական պահանջմունքները բավարարելու խնդրով։ Նա նախապատրաստում է տեխնիկայի զարգացման ապագան, իր տեսական հետազոտություններով նախապայմաններ է ստեղծում արտադրության հետագա հզոր վերելքի համար։

Ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումների հետևանքով մարդկությունը թևակոխում է գիտատեխնիկական մեծագույն հեղաշրջման ժամանակաշրջանը, բայց, ինչպես նշում է պարտիայի Ծրագիրը, կապիտալիզմի արտադրական հարաբերությունները չափազանց նեղ են գիտատեխնիկական ռևոլյուցիայի համար. այդ ռևոլյուցիան իրագործել և հասարակության օգտին նրա պտուղները օգտագործել կարող է միայն սոցիալիզմը։ Սոցիալիստական արտադրությունն ապահովում է գիտության նվաճումների լայն կիրառումը և պահանջում ֆունդամենտալ տեսական հետազոտություններ ու նոր հայտնագործություններ՝ բնության ուժերի ավելի արդյունավետ օգտագործման համար։ Գիտության առջև ծառացած մեծագույն խնդիրները ուղղակի կամ անուղղակի առնչվում են արտադրության հետագա զարգացման հետ. այդ խնդիրների թվին են պատկանում ջերմամիջուկային էներգիայի արտադրական օգտագործման միջոցների բացահայտումը, որի հետևանքով հասարակությունն ընդմիշտ կապահովվի էներգիայի անսպառ պաշարներով։ Ջերմային, միջուկային, արեգակնային և քիմիական էներգիան անմիջականորեն էլեկտրական էներգիայի փոխարկման միջոցների հայտնագործումը մեծապես կհեշտացնի էներգիայի արտադրությունը, անհամեմատ կբարձրացնի նրա օգտակար գործադրումը։

Կանքի երևույթների էության պարզաբանումը, կենսական պրոցեսների, հատկապես նյութերի փոխանակության, օրգանիզմների ժառանգականության տիրապետումն ու կառավարումը կդառնան գյուղատնտեսական արտադրության զարգացման հզոր բազան։ Չկա գիտության այնպիսի ճյուղ, որ հղի չլինի նոր հայտնագործություններով, նոր գաղափարներով, անընդգրկելի հեռանկարներով։

---

[2] «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», Հայպետհրատ, 1961, էջ 99։

[3] Տե՛ս, նույն տեղում, էջ 32։

Զարգացող սոցիալիստական արտադրությունը խթանում է ու արագացնում ֆունդամենտալ տեսական հետազոտությունները, ապահովում տեսական մտքի առաջանցումը անմիջական պրակտիկ պահանջներից, պրակտիկայի ու տեսության միասնության, նրանց փոխադարձ ներթափանցման, օրգանական կապի հիման վրա։

Սոցիալիստական հասարակարգը փրկել է գիտությունը արատավոր ուտիլիտարիզմից, նեղ պրակտիցիզմից, որոնք նույնքան վնասակար են գիտության զարգացման համար, որքան և գիտության խզումը կյանքից, նրա ինքնանպատակայնության քարոզը։ Գիտության տվյալների օգտագործման ուտիլիտար եղանակը, դրա տեսական «հիմնավորումը», ինչպես և «գիտությունը գիտության համար» իդեալիստական կոնցեպցիան ծնունդ են այն սոցիալական կարգերի, որոնցում գիտության զարգացումն ու կիրառումը անխուսափելիորեն ստանում են միակողմանի ու այլանդակ բնույթ, ծառայեցվում շահագործող դասակարգերի շահագիտական, հակամարդկային նպատակներին։

Զարգացող, նյութական և հոգևոր ծաղկունք ապրող սոցիալիստական հասարակարգը գիտությունից պահանջում է նպատակասլացություն, օրգանական կապ արտադրության հետ, ապահովում է նրա զարգացման լայն հեռանկարները, կողմնորոշում դեպի կենդանի կյանքը, դեպի ապագան, ընդլայնում նրա տեսական հետազոտությունները և գործնական կիրառումը՝ կոմունիզմի կառուցման պրակտիկայում։

Կոմունիստական հասարակարգի կառուցումը հասարակության զարգացման օրենքների գիտակցման ու գիտակցորեն կիրառելու պրոցես է։ Այդ պատճառով էլ, ավելի քան երբևէ, բարձրանում է հասարակական գիտությունների դերը։ «Այս բնագավառում,— նշում է պարտիայի Ծրագիրը,— գլխավոր են հանդիսանում կոմունիստական շինարարության պրակտիկայի ուսումնասիրությունը և տեսական ընդհանրացումը, սոցիալիզմի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման ու նրա՝ կոմունիզմի վերաճելու հիմնական օրինաչափությունների հետազոտությունը, կոմունիստական դաստիարակության պրոբլեմների մշակումը»[1]։

Հասարակական գիտություններն ուսումնասիրում են մարդկանց արտադրական և մյուս բոլոր հասարակական հարաբերությունները, բացահայտում հասարակության զարգացման օրենքները, ստեղծում հասարակության զարգացման գիտական պատկերը, կանխատեսում իրադարձությունների զարգացման հիմնական ուղղություններն ու տենդենցները։ Այդ գիտություններն ունեն խոր իմացական և բազմակողմանի կիրառական նշանակություն։ Նրանք հանդիսանում են հասարակության ղեկավարման գիտական հիմքը, հասարակական հարաբերությունների կատարելագործման տեսական բազան, մարդկանց դաստիարակության, նրանց աշխարհայացքի ձևավորման կարևորագույն միջոցը։ Մարքսիստական-լենինյան գիտությունը նոր տվյալներով, դրույթներով ու եզրակացություններով է հարստանում՝ լուսավորելով կոմունիստական հասարակարգի կառուցման ուղին։

Պարտիայի Ծրագրում վերհանվում են այն գլխավոր խնդիրները, որոնք ծառայում են հասարակական, հատկապես տնտեսագիտական և պատմական գիտությունների առջև։

---

[1] «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», էջ 154։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների զարգացումը տեղի է ունենում սեփականության սոցիալիստական ձևերի զարգացման, մերձեցման և սերտաճման միջոցով, որը կհանգեցնի դրանց միավորմանը մի միասնական կոմունիստական սեփականության մեջ, բաշխման կոմունիստական եղանակի տարրերի ծավալման, աշխատանքի նոր, կոմունիստական մեթոդների արմատավորման միջոցով։ Որակական փոփոխություններով բնութագրվող այդ օրինաչափ պրոցեսը, որի գիտական հիմնավորումը և զարգացման հեռանկարները բացահայտված են ՍՄԿՊ Ծրագրում, տնտեսագիտության ուսումնասիրման հիմնական օբյեկտն է։ Տնտեսագիտությունը կոչված է ժամանակին վերհանելու, ամփոփելու և իմաստավորելու տնտեսական կյանքի նոր երևույթները, մշակելու տնտեսության զարգացման պրոբլեմները, որոնց լուծումը կարևոր նշանակություն ունի արտադրության և ամբողջ հասարակության զարգացման համար։ Տնտեսագիտության հիմնական խնդիրներն են՝ ժողովրդական տնտեսության մեջ նյութական աշխատանքային ռեսուրսների առավել օգտակար օգտագործման ուղիների, արտադրության պլանավորման և կազմակերպման ավելի լավ մեթոդների հայտնաբերումը, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման սկզբունքների, կոմունիզմի կառուցման տեխնիկա-տնտեսական պրոբլեմների մշակումը։ Տնտեսագիտությունը կոչված է նաև գիտական վերլուծության ենթարկելու ժամանակակից կապիտալիստական արտադրական հարաբերությունների մեջ կատարվող փոփոխությունները, արտադրության կապիտալիստական եղանակի խոր հակասություններն ու կոնֆլիկտները, դրանց տնտեսական, սոցիալական ու քաղաքական հետևանքները, բացահայտելու ժամանակակից բուրժուական տնտեսական կոնցեպցիաների ու ուսմունքների ապologետիկ ու ռեակցիոն էությունը։

Պատմական գիտությունների ուսումնասիրության հիմնական խնդիրը համաշխարհային պատմության և ժամանակակից համաշխարհային զարգացման պրոբլեմների հետազոտությունն է, որը «պետք է բացահայտի կոմունիզմի ուղղությամբ մարդկության առաջընթացի օրինաչափ պրոցեսը, ուժերի հարաբերակցության փոփոխումը հօգուտ սոցիալիզմի, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սրումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանումը և դրա հետևանքները, ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքը»[5]։

Մեր դարաշրջանի հիմնական բովանդակությունը անցումն է կապիտալիզմից սոցիալիզմին, հասարակության վերընթաց շարժման հիմնական արդյունքը՝ համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը։ Փորձով ստուգված է սոցիալիզմի կառուցման մասին մարքս-լենինյան գիտության ճշմարտացիությունը, հարթված է սոցիալիզմ տանող գլխավոր ճանապարհը և իրականացվում է կոմունիզմին անցնելու պրոցեսը։ Պատմության այդ մեծագույն փորձը կենսական նշանակություն ունի ամբողջ մարդկության ազատագրական պայքարի համար. նրանից է ելնում մարքսիզմ-լենինիզմը, սահմանելով կոմունիստական շինարարության գլխավոր խնդիրներն ու հիմնական էտապները։ Հասարակական գիտությունների առաջնակարգ խնդիրն է՝ վերլուծել ու ամփոփել սոցիալիզմի, կոմունիզմի կառուցման փորձը, վեր հանել և գիտականորեն իմաստավորել այն նորը, որ ծնվում է և արմատավորվում հասարակության նյութական և հոգևոր արտադրության, մարդկանց հասարակական հարաբերությունների մեջ։

5 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», էջ 154։

ՍՄԿՊ XX և XXII համագումարներում մշակված նոր կուրսն ու քաղաքական գիծը, որ տոգորված են լենինյան ռևոլյուցիոն ստեղծագործությամբ, նրանց առաջադրած տեսական նոր դրույթներն ու հետևությունները, որոնք իրենց հրստակ ձևակերպումը ստացան ՍՄԿՊ Ծրագրում, մեծագույն նշանակություն ունեն հասարակական գիտությունների զարգացման համար։ Բաց ու համարձակ քննադատության ենթարկելով, մերկացնելով և դատապարտելով անհատի պաշտամունքը, պարտիան մաքրեց ու մաքրում է տեսական մտքի բնագավառը ևս պաշտամունքի արատավոր հետևանքներից, կոմունիստական գաղափարախոսության ոգուն խորթ մեթոդներից ու տենդենցներից, գիտության մեջ պաշտամունքի ժամանակաշրջանում շերտավորված դոգմատիզմից ու սուբյեկտիվիզմից, ստեղծագործական միտքը բթացնող կաշկանդվածությունից ու մտավախությունից։ Անհատի պաշտամունքը հատկապես մեծ վնասներ է հասցրել հասարակական գիտություններին։ Անհատի պաշտամունքը ծնում էր ու սերմանում դոգմատիզմ, մարքսիզմի կենսահաստատ գաղափարները վերածում էր քարացած սխեմաների։ Ստալինի աշխատությունների մեկնաբանությունները, գովերգն ու մեծարումը դիտվում էին որպես տեսական մտքի կարևորագույն զբաղմունք, այնինչ դրանք խլացնում էին ստեղծագործական միտքը, վատնում գիտության ուժերը, շեղում գիտական կադրերի ուշադրությունը գիտության ու կյանքի կենսական ու հրատապ հարցերի ուսումնասիրությունից ու վերլուծությունից։ Անհատի պաշտամունքի անխուսափելի հետևանքներից մեկն էլ ռեպրեսիաների մեթոդի տարածումն էր գիտության բնագավառում, անվստահության ու կասկածամտության մթնոլորտի ստեղծումը։ Կարծիքների ազատ պայքարը ենթադրում է ընկերական ազատ բանավեճեր, ստեղծագործական պրպտումներ, փոխադարձ հարգանք ու վստահություն, տեսակետների անկանխակալ վերլուծություն, համոզում, գիտական քննադատություն և ոչ թե պիտակների կպցնում, ռեպրեսիաներ ու երկյուղ, որ անհատի պաշտամունքի անբաժանելի ատրիբուտներն էին։

Պարտիայի XX և XXII համագումարների մշակած տեսական դրույթներում, պարտիայի նոր Ծրագրում վերլուծվում են պատերազմի ու խաղաղության, սոցիալիստական ռևոլյուցիայի, պրոլետարիատի դիկտատուրայի, նրա ձևերի, սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման տեսական ու գործնական հարցերը, կանխագծվում կոմունիզմի կառուցման կոնկրետ ուղիները։ Մարքսիստական-լենինյան գիտության ստեղծագործական զարգացումը, անհատի պաշտամունքի հետևանքների հաղթահարումն ու վերացումը, պարտիայի մեծագույն հոգատարությունը գիտությունների զարգացման նկատմամբ, գիտական կադրերի դաստիարակությունը լենինյան ռևոլյուցիոն ստեղծագործության ոգով ստեղծել են լայն պայմաններ ու հնարավորություններ տեսական մտքի ծավալման, բոլոր հասարակական գիտությունների արդյունավետ զարգացման համար։

Հասարակական գիտությունների դաստիարակչական դերն արտահայտվում է ամենից առաջ նրանով, որ նրանք իմաստավորում են պատմական պրոցեսը, լուսաբանում ժողովրդական մասսաների վճռական դերը և ռևոլյուցիոն պայքարի փորձը հասարակության զարգացման մեջ, բացահայտում են կոմունիստական հասարակարգի կառուցման պատմական անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։ Դրանով իսկ հասարակական գիտությունները կոմունիզմ կառուցող սերնդի մեջ արմատավորում են ու հաստատում վստահություն կո-

մունիզմի պատմական անհրաժեշտության ու նրա համար մղվող պայքարի անխուսափելի հաղթանակի նկատմամբ, աջակցում են մասսաների գիտակցական գործունեության ծավալմանը, որը կոմունիստական հասարակարգի կառուցման անհրաժեշտ պայմանն է։ Մեծապես աճում է հասարակական գիտությունների դերը՝ մասսաներին սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու, սոցիալիստական ազգերի հոգևոր մերձեցման, բոլոր ժողովուրդների հոգևոր արժեքները վերագնահատելու և կոմունիզմ կառուցողների սեփականությունը դարձնելու գործում։

Կոմունիստական հասարակության կառուցման կարևորագույն խնդիրներից մեկը նոր մարդու ձևավորումն է, մարդկային անհատի բազմակողմանի զարգացումը։ Պարտիայի Ծրագրում խորապես արտահայտված է հոգատարությունը մարդու, նրա հոգևոր հարստացման, աշխարհայացքի կազմավորման, նրա մեջ կոմունիստական բարոյականության սկզբունքներ արմատավորելու, նրա առողջության պահպանման և ֆիզիկական զարգացման նկատմամբ։ Կոմունիզմը կառուցվում է աշխատավոր մարդկանց համար, հասարակության նյութական ու հոգևոր արտադրությունը ի սպաս է դրվում մարդկանց ձիրքերի, ընդունակությունների, տաղանդների ծավալման ու գործադրման համար։ Այստեղ ևս մեծապես բարձրանում է գիտության դերը, որը ինքնըստինքյան մեծագույն հոգևոր հարստությունն է և մարդկանց բազմակողմանի զարգացման անհրաժեշտ նախադրյալը։ Գիտությունն իր այդ դերը կատարում է ամենից առաջ նրանով, որ լայնորեն ներդրվելով արտադրության մեջ, պայմանավորում է աշխատաժամանակի կրճատումը և դրանով իսկ հնարավորություն է տալիս աշխատավոր մարդկանց՝ իրենց ազատ ժամանակը օգտագործելու կուլտուրական աճի ու շփման, հասարակական գործունեության ծավալման, մտավոր ու ֆիզիկական զարգացման և գեղարվեստական ստեղծագործության համար։ Իսկ բուն արտադրության պրոցեսում նա նպաստում է ոչ միայն աշխատանքի պայմանների բարելավմանը, այլև աշխատանքի ստեղծագործական բնույթի դրսևորմանը և դրանով իսկ աշխատանքը դարձնում է հետաքրքիր ու հրապուրիչ, կենսական անհրաժեշտություն։ XXII համագումարը և պարտիայի Ծրագիրը նշում են, որ կոմունիզմի ժամանակ հասարակության բոլոր անդամների մեջ, աշխատանքի բնույթի փոփոխության և նրա տեխնիկական հագեցվածության աճման շնորհիվ գիտակցականության բարձր մակարդակի շնորհիվ, կգարդանա հասարակական բարօրության համար հոժարակամ կերպով և ըստ հակումների աշխատելու ներքին պահանջը։ Այդ գործում վճռական դեր կխաղա արտադրության ավտոմատացումն ու կոմպլեքսային մեքենայացումը, գիտատեխնիկական պրոգրեսը, որը կոմունիստական աշխատանքի ծավալման ու հաղթանակի պայմանն է։

Սոցիալիստական հասարակությունը, վերջ տալով գիտության չարաշահման և հակամարդկային գործադրման բոլոր միջոցներին ու պայմաններին, դարձրել է այն սոցիալական պրոգրեսի հզոր միջոց, հակագիտական աշխարհայացքի ու դաղափարախոսության դեմ պայքարի հզոր զենք։

Հասարակական գիտությունները հատկապես նշանակալից դեր ունեն բուրժուական դաղափարախոսության, աջ սոցիալիստական տեսության ու պրակտիկայի, ռևիզիոնիզմի ու դոգմատիզմի, ինչպես նաև մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների դեմ մղվող պայքարում։ Հակագիտական աշխարհայացքն ու դաղափարախոսությունը սոցիալական ռեակցիայի

գաղափարական բազան է, կոմունիզմի թշնամիների հոգևոր զենքը։ Գիտությունը կոչված է բացահայտելու դրանց իմացական ու սոցիալական արատները, մերկացնելու դրանց ծնող սոցիալական կարգերի՝ կապիտալիզմի հակաժողովրդական ու ռեակցիոն էությունը, ցույց տալու հասարակության պրոգրեսի գլխավոր թշնամու՝ իմպերիալիզմի սնանկությունը։ Հասարակական գիտությունները հատկապես մեծ դեր ունեն սոցիալական պրոգրեսը ժխտող և նրա իմաստը աղճատող բուրժուական կոնցեպցիաները մերկացնելու ու ջախջախելու գործում։ Ռեակցիոն գաղափարախոսները ժխտում են գիտության կիրառման սոցիալական, դասակարգային բնույթը և ձգտում են կապիտալիզմի արատները վերագրել գիտատեխնիկական պրոգրեսին, պատկերում են գիտությունը որպես մի ինչ-որ դիվային ուժի մարմնացում, որը ենթակա չէ մարդու իշխանությանը և ինքնըստինքյան հղի է սոցիալական սղետներով։ Գիտատեխնիկական պրոգրեսի մռայլ հետևանքները գիտության և տեխնիկայի բուրժուական օգտագործման արդյունքն են, արդյունքն ա՛յն բանի, որ ռեակցիոն բուրժուազիան գիտությունը, մարդկային բանականության նվաճումները ուղղում է հենց մարդկության դեմ, դարձնում դրանք ավերիչ պատերազմների նախապատրաստման ու վարման միջոց։ Գիտության դերի, նրա զարգացման հեռանկարների ու հետևանքների վերաբերյալ ռեակցիոն կոնցեպցիաները մինչև վերջ մերկացվում են սոցիալիստական գիտության նվաճումների մարդասիրական, հանրօգուտ գործադրման փաստով։ Սոցիալիստական գիտությունը ծառայում է ժողովրդին, նրա բարօրությանն ու երջանկությանը։

Սոցիալիստական հասարակարգը բարձրացնում է գիտության դերը ամենից առաջ նրանով, որ ապահովում է նրա անկաշկանդ ու արագ զարգացումը։ Կոմունիզմ կառուցող երկրի գիտական նվաճումները հանրահայտ են։ Սովետական Միությունը աշխարհում դարձել է կուլտուրայի ու գիտության միջնաբերդը. նվաճել է առաջնությունը ամենակարևոր բնագավառներում։ Կոմունիստական պարտիան, սովետական ժողովուրդը սովետական գիտնականների պատվի գործն են համարում՝ նվաճած առաջավոր դիրքերի ամրապնդումը, առաջատար դիրքի գրավումը համաշխարհային գիտության բոլոր հիմնական ուղղություններով։ Պատմական այդ խնդրի իրականացման համար սովետական գիտությունն ունի բոլոր պայմանները՝ ամրապնդվող նյութական բազա, կիրառման լայն հնարավորություններ, գիտական աշխատողների հզոր կոլեկտիվ և պարտիայի, ամբողջ ժողովրդի հոգատարությունը՝ գիտության զարգացման նկատմամբ։ «Գիտության զարգացումը և ժողովրդական տնտեսության մեջ նրա նվաճումների արմատավորումը առաջիկայում ևս կլինեն պարտիայի հատուկ հոգատարության առարկան»[6],— ասվում է ՍՄԿՊ Ծրագրում։ Նախատեսված է միջնակարգ և բարձրագույն դպրոցի, գիտա-հետազոտական ինստիտուտների և գիտական այլ հիմնարկների ցանցի հետագա ընդլայնում, գիտական աշխատանքի կազմակերպման, պլանավորման ու կոորդինացման մակարդակի բարձրացում, լայն միջոցառումներ՝ գիտական կադրերի պատրաստման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ։ Կոմունիզմի կառուցման պրոցեսում ավելի խոր ու բազմակողմանի կդրսևորվեն սովետական գիտության առավելությունները զարգացման ու պրակտիկ կիրառման պայմանների ու հնարավորու-

6 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», էջ 151։

թյունների տեսակետից, ավելի ևս կբարձրանա նրա ակտիվ, վերափոխիչ, ռևոլյուցիոն դերը։

ՍՄԿՊ Ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում գիտական հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների տեղաբաշխման բարելավման խնդրին, այն հաշվով, որ ապահովվի գիտության հետագա զարգացումը բոլոր միութենական ռեսպուբլիկաներում և խոշոր տնտեսական շրջաններում։ Սովետական գիտությունը, ինչպես և ամբողջ սոցիալիստական կուլտուրան, կոչված է բավարարելու սոցիալիստական բոլոր ժողովուրդների աճող հոգևոր պահանջմունքները, աջակցելու նրանց հոգևոր մերձեցմանը, ամրապնդելու նրանց բարեկամությունն ու հզորությունը։

Լենինյան ազգային՝ քաղաքականության կենսագործումն իր հարուստ պտուղներն է տվել նաև բոլոր սոցիալիստական ազգերի գիտական զարգացման բնագավառում։ Բոլոր սոցիալիստական ռեսպուբլիկաներն ու ազգային այլ միավորումները դարձել են ժամանակակից գիտության օջախներ, բոլոր ռեսպուբլիկաներում հիմնադրված են գիտությունների ակադեմիաներ։ Այդ ռեսպուբլիկաների մեծ մասը մինչև ռևոլյուցիան չուներ ոչ մի գիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություն։ Մեր ռեսպուբլիկան ծածկված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ու գիտական հիմնարկների լայն ցանցով, ունի գիտության այնպիսի օջախ, ինչպիսին է Ակադեմիան իր բազմաթիվ գիտա-հետազոտական ինստիտուտներով։ Այդ ինստիտուտների մշակած պրոբլեմներից շատերը ստացել են միութենական և համաշխարհային ճանաչում։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի XXII համագումարը բարձր գնահատական տալով ռեսպուբլիկայի գիտության նվաճումներին, հատկապես ընդգծեց, որ ռեսպուբլիկայի գիտնականներն իրենց ջանքերն ավելի ու ավելի մեծ չափով են կենտրոնացնում առավել հրատապ գիտական ու տեխնիկական պրոբլեմների հետազոտման, արժեքավոր հետազոտությունները կյանքում արմատավորելու վրա, միաժամանակ վեր հանեց մի շարք լուրջ թերություններ գիտական հիմնարկների աշխատանքում։ Համագումարը խնդիր դրեց ռեսպուբլիկայի գիտական հիմնարկների առջև՝ բարելավել գիտական աշխատանքի դրվածքը, գիտական կադրերի պատրաստումը, կոչ արեց ռեսպուբլիկայի գիտնականներին՝ արժանի ավանդ մուծել Կոմունիստական պարտիայի կողմից գիտության առջև դրված խնդիրները պատվով կատարելու գործում։

* * *

«Ինչպե՞ս չհպարտանանք մենք սովետական գիտության մեծ նվաճումներով»,—ասաց Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII համագումարում, արտահայտելով ամբողջ սովետական ժողովրդի օրինական հպարտությունը սովետական գիտությամբ։ Սովետական ժողովուրդը հարթում է չհետազոտված ուղիներ հասարակության վերընթաց շարժման մեջ, իրականացնում է կոմունիզմի մեծ նախագծումները, բացում է գիտության հետագա զարգացման անծայրածիր հորիզոնները։

Կոմունիստական պարտիան իր գործունեությամբ հիմնական խնդիրներից մեկը համարում է գիտության դերի հետագա ուժեղացումը կոմունիստական շինարարության մեջ, ի սպաս է դնում գիտությունը պայծառ ապագայի հաղթանակին։ ՍՄԿՊ Ծրագիրը բացահայտում է գիտության մշտապես աճող դերը հասարակական կյանքում. ուղղում է ստեղծագործական միտքը դեպի հասա-

բակական պրոգրեսի կարևորագույն խնդիրների լուծումը, դեպի կենդանի պրակտիկան, ընդգծում է ռևոլյուցիոն տեսության կարևորագույն դերը, տեսություն, որը «առաջիկայում ևս պետք է լուսավորի պրակտիկայի ուղին, օգնի այն խոչընդոտները և դժվարությունները բացահայտելուն ու հաղթահարելուն, որոնք խանգարում են կոմունիստական հաջող շինարարությանը»[7]։ Սովետական գիտությունը զինված է ամենաառաջավոր աշխարհայացքով, կենսահաստատ գաղափարախոսությամբ, մարքսիզմ-լենինիզմի պայծառ ու վեհ գաղափարներով, ծառայում է վեհագույն նպատակի՝ կոմունիզմի հաղթանակին։ Կոմունիզմի և գիտության միասնությունը պատմության մեծագույն նվաճումն է, նորանոր հաղթանակների գրավականը։

---

7 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», էջ 142։